

Հ Ա Ն Գ Ի Ս Տ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԽՈՐԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ
(1872—1956)

Հովաների 2-րդ դիշորը, երկարատև և օտար հիվանդությունից հետո, ի Տեր Հանգլավ Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանը: Հանգուցյալը մեղել է 1872 թվականին վան քահարում: Մանուկ հասակից գրվելով ծնողներից, տարվում է Վարազա վանքի գիշերօթիկ հոգևոր դպրոցը, որն ավարտելուց հետո երկար տարիներ զբաղվում է ուսուցչությամբ: Համաշխարհային առաջին պատերազմի օրերին նա հազարավոր հայերի հետ գաղթում է Հայաստան և բնակություն հաստատում Արևանում, որտեղ ձեռնարկում է հայ որբ մանուկների հավաքագրման շնորհակալ աշխատանքին: 1919 թվականին Խորեն արքեպիսկոպոս Միրզաբեկյանի ձեռամբ նա ձեռնադրվում է քահանա Արևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վրա: Երկար տարիներ նա եղել է Արևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Զորավոր եկեղեցիների ավագերեցը, հավատացյալ ժողովրդի սիրված հովիվը: 1940 թվականից սկսած հանգուցյալը պաշտոնավարում է Ս. Էջմիածնի Մայր Տաճարում:



Տ. Խորեն ավագ քահանան աչքի էր բնկնում իր եկեղեցական հմտությամբ և ծառայասիրությամբ ու սիրով դեպի Հայ եկեղեցին և հայ ժողովուրդը: Հանգուցյալը իր ունեցած սեփական եկեղեցական գրքերն ու սպասաները կտակել է Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցուն: Հովաների 5-ին պատարագից և հանգուցյալի վերջին օժոմբ կատարեց զեբաշնոր՝ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը: Մարմինը ամփոփվեց Ս. Գայանեի վանքի դամբում: Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանի մահը մեծ կորուստ է Մայր Աթոռի համար: Նա մեր լավագույն ու սիրված քահանաներից էր, քաջամուտ եկեղեցական երզնցողության, նախանձախնդիր և Մայր Աթոռի պայծառության նվիրված ազնիվ հոգևորական: Նրա խնկելի հիշատակը միշտ վառ կմնա իր հավատացյալ ժողովրդի սրտում և Մայր Աթոռի միաբանության հոգում: Հավիտենական հանգիստ իր հոգուն: «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

